ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱՁԵՎ

2014 թ. հոկտեմբերի 6-7-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվեց և անցկացվեց «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովը: Երկօրյա համաժողովի մասնակիցները ձևավորեցին գործադիր մարմին հետևյալ կազմով.

1.	**Գոճանեան**	**Հայր Պօղոս Վրդ.**	Վիեննայի մենաստանի տեղական աբբահայր:
2.	**Զարգարյան**	**Տիգրան**	Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն:
3.	**Կազազյան**	**Հայր Նորայր Վրդ.**	Երուսաղեմի Հայոց Պատրիարքություն, Գալուստ Գյուլպենկյան մատենադարանի տնօրեն:
4.	**Ղազարյան**	**Դավիթ**	Մատենադարան-Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, Ձեռագրատան ֆոնդապահ:
5.	**Մինասյան**	**Կարապետ**	ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:
6.	**Միրզոյան**	**Եզնիկ**	ԵՊՀ գրադարանի տնօրեն:
7.	**Պողոսյան**	**Տեր Արարատ քահանա**	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն:
8.	**Սիսլիյան**	**Սոնյա**	Բեյրութ, Հայկազյան համալսարանի գրադարանի տնօրեն:
9.	**Տոնանեան**	**Հայր Մովսես Վրդ.**	Զմմառի Փոխյալ Սրբո Կուսի Վանքի քարտուղար, գրադարանապետ, թանգարանապետ և լուսարար:
10	**Փանոսյան**	**Տիրայր արքեպիսկոպոս**	Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանի տեսուչ:
11	**Փեհլիվանյան**	**Մելինե**	Բեռլինի պետական գրադարան, Արևելքի բաժնի պատասխանատու:
12	**Օհանեան**	**Հայր Վահան Վրդ.**	Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի տնօրեն:

Համաժողովն արձանագրեց դրական տեղաշարժերը, որ տեղի են ունեցել հայկական գրադարանների առաջին և երկրորդ համաժողովներից հետո: Արձանագրեց, որ մատենագիտական շտեմարանների ձևավորման և գրադարանային հավաքածուների թվայնացման ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ: Ձևավորվել են.

ա. հայերեն հնատիպ գրքի համահավաք շտեմարանը,

բ. Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակը,

գ. հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը,

դ. հայ մամուլի համահավաք գրացուցակը:

Դրանք առ 2014թ. հոկտեմբերի 1-ը պարունակում են. «Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակը» 800.000-ից ավելի մատենագիտական գրառում և իսկ «Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանները» 1,600.000-ից ավելի թվայնացված էջ (գիրք՝ 842,857 էջ, թերթ՝ 73,432 էջ, հանդես՝ 691,971 էջ) /գիտատեղեկատվական հանգույցը առ 2012 թ. հոկտեմբերի 1-ը պարունակում էր մոտ 500.000 թվայնացված էջ/:

Թվայնացված նյութերը հասանելի են **www.nla.am** և **www.flib.sci.am** կայքերում:

Գրադարանային գործի առաջընթացն ապահովելու, ժամանակակից մարտահրավերների պայմաններում գրադարանների աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով համաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայկական գրադարանների չորրոդ համաժողովը հրավիրել 2016 թվականին, Թարգմանչաց տոնին:
2. Հայաստանի ազգային գրադարանին հանձնարարել շարունակել հայագիտական կենտրոնների էլեկտրոնային գրանցահամակարգը շահագործելը, որտեղ կգրանցվեն Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայկական գրադարաններն ու հայագիտական հաստատությունները:
3. Համաժողովի մասնակիցներին հորդորել գրանցվել հայագիտական կենտրոնների համակարգում, որը հասանելի է http://www.nla.am/eng/?q=contact հասցեից:
4. Սփյուռքի գրադարանների պատասխանատուների մասնագիտական մակարդակը բարձրացնելու նպատակով շարունակել Հայաստանի ազգային գրադարանում վերապատրաստման դաընթացների անցկացումը:
5. ՀՀ կառավարության հատուկ ուշադրությունը հրավիրել Սփյուռքում առկա և ազգային մտավոր ժառանգության մաս կազմող վտանգված, լքյալ, անուշադրության մատնված հավաքածուների և գրադարանների վրա:
6. Անհրաժեշտության դեպքում Հայաստանի ազգային գրադարանից համապատասխան մասնագետներ գործուղել Սփյուռքի գրադարաններ՝ տեղերում մեթոդական օգնություն ցուցաբերելու համար:
7. Խթանել ՀՀ և Սփյուռքի գրադարանների միջև գրքափոխանակության աշխուժացումը՝ դրանում կարևորելով ինչպես ՀՀ մշակույթի, սփյուռքի, արտաքին գործերի նախարարությունների պատասխանատուների, այնպես էլ կրոնական կառույցների՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայ Կաթողիկե եկեղեցու և Հայ Ավետարանական եկեղեցու շահագրգիռ մասնակցությունը:
8. Դիմել ՀՀ մշակույթի նախարարությանը՝ ֆինանսավորելու արտերկրի գրադարաններին և հաստատություններին՝ հնատիպ ու հազվագյուտ գրքերի և պարբերական մամուլի թվայնացման գործընթացը տեղերում

կազմակերպելու։

9. Հայաստանի ազգային գրադարանին հանձնարարել ապահովել հայ հնատիպ գրքի և հայ պարբերական մամուլի համահավաք շտեմարանների ձևավորման և հանրայնացման աշխատանքները։
10. Հայագիտական հանդեսներին ուղարկել հաղորդագրություն, որում կներկայացվի հայագիտական հետազոտությունների գիտատեղեկատվական հանգույցը, այնտեղ ամբարված շտեմարանների հակիրճ նկարագրություններով։ Գլխավոր խմբագիրներին առաջարկել այդ հաղորդարությունները տպագրել հանդեսների վերջին էջերում։
11. Սկսել նախապատրաստական աշխատանքներ, «Հայ մամուլի վերլուծական հոդվածների» շտեմարանի ձևավորման ուղղությամբ։
12. Շարունակել գրքափոխանակության աշխատանքները հայագիտական կենտրոնների և Հայաստանի ազգային գրադարանի միջև։
13. Հանձնարարել Հայաստանի ազգային գրադարանին ձևավորելու Հայոց ցեղասպանությանը վերաբերվող գրականության հնարավորինս լրիվ հավաքածու։
14. Մասնակից հաստատություններին հանձնարարել մշակել հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրության 350-ամյակն ընդառաջ միջոցառումների հստակ ծրագիր՝ 2016 թ. իրենց կառույցներում այս նշանակալից իրադարձության հանրահռչակման նպատակով։
15. Սոցիալական ցանցերում տեսանելի դարձնել համաժողովի աշխատանքները։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ